ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

_____№ _____
Ձեր N _____

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
ekhachatryan@peacedialogue.am

Հարգելի պարոն Խաչատրյան

Ի պատասխան Առողջապահության նախարարությանն ուղղված Ձեր՝ 22.06.2023թ. հարցմանը՝ «Նախկին ռազմագերիների իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» զեկույցի (այսուհետ՝ Զեկույց) վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Զեկույցի «Նախկին ռազմագերիների առողջության պահպանման իրավունքը» բաժնի առաջին պարբերության՝ «ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չէ նախկին ռազմագերիների իրավական կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները, առկա չէ նաև կարգավորում՝ համաձայն որի նախկին ռազմագերիները հնարավորություն կունենային անվճար բժշկական օգնություն ստանալու» վերաբերյալ տեղեկացնում եմ, որ Կառավարության 30.03.2006թ. N 420-Ն որոշման հավելված 1-ով հաստատված առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգի 6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի (այդ թվում Զեկույցում նշված հայրենադարձված ռազմագերին) պետության կողմից երաշխավորված անվճար և այլ պայմաններով առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններ է ստանում այն ԱԱՊ բժշկական հաստատության ԱԱՊ բժշկի մոտ, որին կամավոր ընտրել է և ում մոտ սահմանված կարգով գրանցվել է: Պետական պատվերի շրջանակներում ԱԱՊ բժշկական հաստատություններում մատուցվող ծառայությունների ծավալները, այդ թվում՝ ըստ բժշկական ցուցումների ԱԱՊ բժշկի ուղեգրմամբ նեղ մասնագիտական խորհրդատվությունները (ակնաբույժի, քիթ-կոկորդ-ականջաբանի, սրտաբանի,

նյարդաբանի, վիրաբույժի) և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ցանկը հաստատված են Առողջապահության նախարարի 13.06.2022թ. N 40-Ն հրամանի հավելվածով հաստատված չափորոշչով: ԱԱՊ բժշկական հաստատություններում անվճար են նաև դիսպանսերային ծառայությունները (հակատուբերկուլոզային, ուռուցքաբանական, հոգեբուժական (նարկոլոգիական), մաշկավեներաբանական, վարակաբանական, էնդոկրինոլոգիական):

«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում պետությունը յուրաքանչյուր հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի համար երաշխավորում է բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում անհետաձգելի հոգեբուժական օգնությունը և սպասարկումը, ինչպես նաև հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում հոգեբուժական օգնությունը և սպասարկումը:

Առաջարկվում է նշյալ բաժնում «308» թիվը փոխել «318» թվով: Միաժամանակ «Կարգում լրացում կատարելու միջոցով, մինչդեռ, հնարավոր է ապահովել նաև նախկին ռազմագերիների անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքը» ձևակերպումը հստակեցման կարիք ունի, քանի որ հասկանալի չէ, թե որ կարգին է վերաբերում առաջարկը: Նույն բաժնի «Հնարավոր են իրավիճակներ, երբ զինծառայողը գերության ընթացքում ստանա վնասվածք, սակայն չճանաչվի հաշմանդամ և ծառայությունից արձակվի այլ հիմքով, որի պարագայում չի կարող անվճար բժշկական օգնությունից օգտվել վերը նշված 10-րդ կետի հիմքով» ձևակերպումը նույնպես հասկանալի չէ, քանի որ Կառավարության 04.03.2004թ. N 318-Ն որոշման հավելված 1-ով հաստատված պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում 19-րդ կետով ընդգրկված են զինծառայության ընթացքում ստացած վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված այն անձինք, ովքեր ֆունկցիոնալության գնահատման արդյունքում հաշմանդամություն ունեցող անձ չեն ճանաչվել (հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում՝ անձի

ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի կողմից կազմված ծառայությունների անհատական ծրագրի շրջանակներում):

Ինչ վերաբերում է Զեկույցի «Նախկին ռազմագերիների առողջության պահպանման իրավունքը» և «Առաջարկություններ» բաժիններում ներկայացված նախկին ռազմագերիներին ողջ կյանքի համար անվճար և որակյալ բժշկական օգնություն ստանալու իրավունքի ապահովմանը, ապա տեղեկացնում եմ, որ այդ հարցը կարող է դիտարկվել առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրման համատեքստում, որը մեկնարկվելու է 2024 թվականից և իրականացվելու է փուլային կարգով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Առողջապահության նախարարությունը պատրաստակամ է Զեկույցում նշված Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեղեկատվության համաձայն՝ նախկին ռազմագերիների առողջական խնդիրների, այդ թվում՝ հոգեկան առողջության վերաբերյալ բողոքների հետ կապված կազմակերպել քննարկում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

X _____

Կատարող՝ Վ. Խաչատրյան,
Հեռ՝ (060) 80-80-03 /12-17
ԱՆ ԲՕՔՎ առողջապահության գլխավոր կազմակերպիչ